

ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՅՈԲԵԼԵԱՆ ՀԱՆԴԵՍ

Ի ՊԱՏԻՒ ՀԱՅԿԱԶՆ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՊՐ. ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ



ՈՐԻՆԻ 47 օրը Մոսկուայի լա-
զարեան հայկական ճեմարա-
նի դաշնիճը սովորականէ դուռս չքե-
ղոթեամբ կը փայլէր. խիտ առ խիտ
դուռարեաց միջէն կը ցուլային իւղաներկ
թանկագին պատկերք երից կայսերացն
նիկուցի Ա. Ալեքսանդրի Բ, և այժմ
թագաւորող Ալեքսանդրի Գ, ոսկի շրջա-
նակներով. նոյնպէս ազգիս բարերար
ճեմարանին հիմնադրաց կենդանագիր-
ներն Սակայն գահճին շքեղ զարդուց
միջէն, փորբահասակ ծերունոյ պատ-
կերը ամենեցոն ուշադրութիւնը կը
գրաւէր. վասն զի այդ պատկերին մաս-
նաւոր առանձնաշնորհութիւն նուի-
րեալ էր նոյն օրը, երինագոյն ծաղկաք
և դաշարագեղ ճիւղերով զարդարեալ
լինելով: Այդ էր կենդանագիր կմի-
նեան գիտնականին և ուսուցի (50 տա-
րի) Հայոց գպրութեան, նոյն ճեմարա-
նին մէջ:

Գիտնական ծերունոյն յիմնամեաց
անխոնչ և արդիւնաւոր վաստակը փա-
ռաւորելու համար ժողոված էին ճեմա-
րանին մեծ սրահին մէջ բազմաթիւ մե-
ծապատիւ անձնիք, որոց մէջ առաջին
տեղին ունէր հայազգի իշխանն դեկա-
նով, որ ընդհանուր իրուաց ազգային
լուսաւորութեան Նախարարն է. նոյն-
պէս ներկայ էր հանդիսական՝ Մոսկուայի
նահանգին խնամական ուսմանց, կոմ-
սըն Քապանիստ, և այլք բազումք:

Երբ ծերունի գիտնականն մտաւ գա-
լարազարդ դահճին մէջ, ընդ առաջ

գնաց ճեմարանին վերատեսուց, ընդ
նմա վարժապետք և ուսուցիչը. առա-
ջին ողջոյն և չնորհաւորութիւն մաղ-
թեց նմա Նախարարն լուսաւորութեան
որ ընկեր եղած է կմինեանի և դասա-
կից ապա հանդիսական ձևով կարգաց
բարձրաձայն Պր. Խալաթիթեանց, ուսու-
ցին Հայ գպրութեան և յաջորդն էմի-
նեանի, բոլոր հանդիսագրաց անուան-
քը. յնա որոյ 'ի հայ լեզու կարգացուե-
ցան Սրբ. Մակար կաթողիկոսի մաղթու-
ղական կոնդակը և Սրբ. Յարութիւն
պատրիարքի Հայոց 'ի կ. Պօլիս՝ չնորհա-
ւորութիւնք: Այլ և այլ ուսումնական
ժողովոց նուիսակութիւնք հետզգիետէ
մասուցին իրենց յարդանքը. Մոսկուա-
յի համալսարանին խնամակալը Բոդո-
լէպով ծանոյց՝ որ կմինեան ընտրուած
է անդամ պատույ համալսարանին,
նոյն պատիւը յայտնեցին և նուիսակուն
Մարգախօսութեան ընկերութեան ՊՊ.
Զորբրափ և Ֆիշէր. Դարձեալ 'ի դիմաց
ընկերութեան Ծուռ դպրութեան կար-
գաց մաղթանքներ Պ. Ճանշիւ. Հնա-
գիտական ընկերութեան կողմանէ Պ.
Նիկոլայի. Մոսկուայի հինգ մարզոցաց
կողմանէ ուսուցիչն Զուբրով: Ազա-
յայլ և այլ քաղաքաց հասած մաղթանք.
Ները նամակաց միջոցաւ. նախ Պե-
տրոսուրզի համալսարանի արևելագէտ
բաժնէն. ապա Փարիզու արևելեան
կենդանի լեզուաց գպրոցին կողմանէ
զրկուածը, յետոյ յայլ և այլ արևելա-
գէտ ուսումնականաց զրկած չնորհաւո-

բութինքը, ինչպէս ների, ժիւադի, կութինքը, լուի էմետի, չիւրմանի և Ստմբիդ-Մւկիլերի. 'ի կ. Պօլսէ Յունաց Սիլլողովի զրկածը, վենետիկյ և վեննայի Մխիթ-թարեան Միաբանութեանց շնորհաւո-րութինքը, որոց հետի կ ենեսակոյ զըր-կուած էր Հ. Ղեւոնդ Ալիշանի նոր աշ-խատութիւնն Սիսորակ՝ չքեղ կազմով: Ապա կարգացուեցան 'ի թեմակալ ա-ռաջնորդաց, 'ի զանազան ժողովրդոց և 'ի քաղաքաց՝ յուսումնարանաց եկած հետագիր մաղթանք, 'ի Պետրովրդէ, յերեանու, 'ի Խըզլըրեառէ, 'ի Նոր Նա-խինեանէ, որոյ արհեստական վարժո-ցին կողմանէ զրկուած էր և արծաթի դրիչ մի. 'ի բազմաթիւ աշակերտաց և 'ի յարգողաց էմինեանի արդիւնքը, յորս ականաւորք են կոմնին Լորիս-Մէլիքեանի զրկածը 'ի նեցցայէ և նը-կարչապետ Այլազեան Յովհաննէս ա-զայի զրկածը 'ի թէողոսից:

Նյոյն օրը Էրմիթժատ պահնդոկին մէջ մեծ հացկե բոյթ ճաշ պատրաստուեցաւ բազմաթիւ հանդիսականաց, ուր ՚ի պատիւ կմիինեանի՛ շատ ճառախօսութիւնք եղան, այլ նշանաւոր է Պ. Քանանեանց իշխանն՝ ՚ի ճեմարանին, որ իւր համառոտութեան մէջ ազդու կերպով կը նկարագրէ կմիինեանի յիմնամեայ կեանքը և արդիւնքը: «Ճէն և ուրախ սրտով միանգամայն՝ ՚ի խոր զգածեալ, ՚ի նկատի ունելով ձեր բազմազդութանի արդիւնքը և բազմարեղուն կեանքը, կ'ողունեմ զձեզ, Մկրտիչ, Յովսեփայ որդի, ՚ի գիմաց Լազարեան ճեմարանիս արևելեան լեզուաց: Տեղիս ձեզ ծանօթ է քաջ, և ի՞ւ անցելոյն յիշատակօք. - զի կապակցեալ են ընդ նմա ձեր վաստակաւոր կենաց լուագդյն տարինելն: Նա եղած է խանձարուրը ձեր մտաց զարդացման, և ապա ասպարէզ անխոնջ արդիւնաշատա և ինքնանուելը վաստակոց: Ասո՞ւ այս շնորհիս գերանաց ներքոյ: Երբինագեղ ծավկեցան՝ ՚ի վերուստ ձեզ չնորհուած տուրք աստուածապարդն, աստ ընտրեցիք դուք այն մասնագիտութիւնը, յորում ոտն առ ոտն յառաջելո՞վ՝ հասար արդ բարձրութեան

աստիճանին . աստ , այս տեղ դրուած են հիմունք կարեոր գիտութեանց . ապա բացուեցան ձեր գիմաց դրունք լու . սապայժառ տաճարին , որ վասն մեր ամեննեցուն առհասարակ մեծայարդ է , զոր և ամէնքս կը յարգեմիք իրրե մեր հասարակաց թանկազին դայեակը , ալ- տա ուուր . դուք , բարձրագոյն դիտու- թեանց լուսով լուսաւորեալ , ամբարե- ցիք ձեր մտաց մէջ բազմակողմանի գի . առութիւննը , և ապա դարձաք առ ցան . կալին ձեր հին աշխարհ , ատըռտել , գըն . նել հնագոյն ազգի մի յիշատակարան- քը , յորում և գերազանց գտաք , իրրե վարժապետ և քերդող արուեստին . ձանցուած է արդէն ձեր գրաւոր վաս- տակոց յարգը , և նոցա նշանակու- թիւնը մեծ պիտի լինի ապագայ սերըն . ոոց դիմաց : Այդոնց վրայ չեմ մոտադիր երկարաճառ լինելու . սակայն չեմ կա- րող լուութեամբ անցնելու այս նշանա- ւոր հանդամանքը . դուք առաջին անդամ առ մեզ 'ի Բուսաստան ճամբայ բացիք ուսումնական հետազօտութեանց հայ- կական յիշատակարանաց , և առաջին դուք ձեռք զարկիք քննադատական մը- տօք քննել այդ գրուածները . դուք ա- ռաջին , ընտիր գրչաւ թարգմանելով 'ի ոուս լեցու 'հոգեոր և աշխարհական , հիացման արժանի յիշատակարանքը մեր նախնեաց մատեննազրութեան , ծա- նօթացուցիք ոուս դիտնականաց . դուք առաջին այդ մասնական դիտութիւնը բարձրացուցիք այն աստիճանի աստ 'ի յուսաստան , որ ձեզմէ առաջ մեր սահ- մանէն զրաերը միայն կարող էինք փըն- տուել գտնելու :

և Սակայն ձեր դաստիարակութեան
ասպարիգին մէջ ցուցած զործունէու-
թիւնը, ոյնչ նուազ է քան զծեր ու-
սումնական արդիւնքը. սոքա երկուքն,
զոյգ հաւասար՝ իրբն երկու լրտա-
ւոր աստիղը, ձեր արդիւնաշատ կի-
սադարեան կենաց շրջանին մէջէն կ'ան-
ցնին: Այս, կը զժուարիմ ես արտայայ-
տել մէջ այս երկու ասպարիգաց մէջ
յորում է ձեր մեծ արդիւնքը, յո՞ւ
կսղմն արդեօք կը հակի նժարը՝ յօդուա

հասարակաց : Հաստ զժուար է 'ի համար առնուլ կամ՝ ճշգութեամբ ցուցընել 'ի դաստիարակութեան ասպարիղին եղած անձնանուէր շահատակութիւնք . աստ՝ արդինք անտեսանելի իմն են . աստ գործք՝ չունին իրենց սեփական անուանակոյութիւնը ... Այլ թող խօսին ձեղ 'ի նպաստ՝ ձեր բազմաթիւ աշակերտքը , որոց և արձագանքը լսուեցաւ սյօմօր թուսաստանի ամէն կողմէն . թող խօսին բազմախումբ գործող անձինք , որք ձեր հետոց ետեւէն գնալով , ձեր բացած ճամբով սերունդը են ծնողիդ , առանց անգամ իրենց գիտութեան : Թող ձայն բարձրացընէ խօսի՛ հաստատուն հիմնաց վրայ կայիշեալ դաստիարակութիւն աղջային (հայերէն) լեզուիս , որոյ անկիւնաքարն ձեր խնամուտ ձեռօք դրուած է այս շէնքիս մէջ : Ես իմ կողմանէ , իրքեւ ականատես վկայ , կարող եմ հաստատել որ ձեր դաստիարակական գործունէութիւնը չէր իրքն մի պաշտօն , այլ ոգեսրեալ և եռանդնալից սպասարկութիւն դաստիարակական անձնանուէր և անձնանուց ծառայութիւն պարտուց , հուսկ ապա՝ կ'ըսեմ առանց չափազանցութեան մէջ ընկնալու վախի , որ ձեր յասպարիղի դաստիարակութեան մատուցած ծա-

ռայութիւնն՝ նուիրագործութիւն իմն էր մշտակայ : « Միայն տեղի տալրվանողքելի օրինաց ժամանակին , հարկ եղաւ ձեղ դարել 'ի գործելոց 'ի ձեմարանիս . այլ ձեր լուսաւորեալ և բարեզգած միտքը անդագար գործելու ետևէ է , ուսումնական հետազոտութեանց աշխարհին մէջ : Կը ժափաքիմ 'ի բոլոր սրտէ՝ որ Աստուած տայ ձեղ զօրութիւն և առողջութիւն , գեռ ևս երկար տարիներ աշխատելու յօդուտ ազգիս դպրութեան , ալնորեալ հնութիւնը մեկնաբանելու , յուրախութիւն և 'ի միտիթարութիւն ձեր բազմաթիւ բարեկամաց ց :

Վերոյդրեալ յորելեան հանդիսաւուասորագրութիւնը համառօտեցինք ներկայ տարւոյս Տեղեկութիւննք Մուկուայի կոչուած լրազրոյն ապրիլ 28 թերթէն : Բազմավիպիս միջոցաւ ծանուցանելով ազգիս Հայկազն գիտնականին , Մեծապատիւ Մկրտչի կմինեան , 'ի Մուկուա ընդունած պարտուածաշն պատիւը . ուրախակից կը լինիմք և Պ. Քանանեանցի հետ կը մաղթեմք ծերացեալ գիտնականին դեռ ևս շատ տարիներ ժիր և քաջառողջ կենօք ապրելու 'ի պարծանս Հայ ազգիս :

ԷՄԻՆԵՆՑԻ ԳՐԱԿԱՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՔ

Ա. ՀԱՅԵՐԵՆ

Քերականութիւն գրաբառ լեզուիս Հայոց .

Դրաբառ ծաղկաքաղ հատուածք . Հայ - ուսւ բառարանով .

Վէպ հնոյն Հայաստանի .

Բ. ԱՌԵՆԵՐԵՆ ԹՎԵՐԴՄԱՆՈՒԹԻՒՆՔ

Պատմութիւն Հայոց Մ. Խորենացւոյ . - (Ե. գարու) . Ծանօթութեամբք . [Ժեամբք ; Պատմութիւն տիեղերական Մեծին Վարդանայ . - (ԺԲ. գարու) . մեկնաբանուաթիւն տիեղերական Ստեփանոսի Տարօնեցւոյ . - (ԺԱ. գարու) . Ծանօթութիւն տիեղերական ներսեսի Լամբրունացւոյ . - (ԺԲ. գարու) . [Ժեամբք . Ամբողջ թարգմանութիւն Շարականացաց :

Գ. ԳՅԱՂԻԵՐԻՆ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆԻ

Փառառոս Բիւզանդացի.

Պատմութիւն Հայոց, Յովհան կաթուղիկոսի. — Թ դարու.

Թուղթ Հազարայ Փարաեցւոյ առ վահան Մամիկոնեան. — Ե դարու.

Պատմութիւն Աղուանից, Մովսիսի Կաղանկատուացւոյ. — Ժ դարու.

Ժամանակագրութիւն Մխիթարայ Ալյիվանեցւոյ. — Ժ դարու.

Տիբերական պատմութիւն Մեծին Վարդանայ. — Ժ դարու.

Պատմութիւն Սիւնեաց աշխարհին, Ստեփանոսի Սիւնեցւոյ. — Ժ դարու.

Բաց յայսցանէ ունի Պ. Էմինեան այլ և այլ միջոցաւ դրած պրակներ՝ մեծաւ մասամբ՝ ՚ի ռուս լեզու, զորս հոս մանր նշանակելը աւելորդ համարեցանք:

Հ. Գ. Վ. ՔԸՆԸՆԵՐՆԵՐՆ

ԿԱԹՈՒԱՆ ՀԱՅԱՑ ՎԱՐԺԱՐԵԱՔ և Կ. ՊՈՒԽ. —
Գաղղիական Le Temps օրագրէն կը քաղենք հետևեալ տողերը: — « Վերջին տեղեկագիրն՝ զոր գերապ. Ազարեան կաթուղիկոն հաճեցաւ ուզարկել առ ընկերութիւնն Արևելեան Գայրոցաց՝ յԱրևեմուտս, մեր առջև կը գնէ ներկայ գայրոցական վիճակն յարելս, և իւրաքանչիւրթեմի ունեցած կարօսութիւնները. Մենք զլնթերցողն՝ կ'առաքենք ուղակի Նորին Սրբազնութեան տեղեկագրին վերծանման, գոհ լինելով միայն ծանուցանել աստ' որ հայկական պատրիարքութիւնն ունի ներկայապէս ինն գայրոց ՚ի կոստանդնուպօլիս և ՚ի շրջակայս: Այս վարժարաններէն երկուքն՝ զիստանկան աշխարհի մէջ քաջածանօթ՝ վենետիկյ Մխիթարեան Հարց վարչութեան ներքէ են իրկու գարոցք աղջըկանց, յանձնուած են Անարատ-Յղութեան հայուհի Քերց: — Ուսմանց հիմունքն կայացեալ են բնականաբար հայ լեզուին վրայ, բայց արտաքոյ չեն մնացեր նաև երպապական լեզուք, որք ամենակարեւոր են արևելեայց համար: Առաջին տեղին բռնած է գաղղիերէնն, ընդհակառակն անգղիերէնն միայն եր-

կու վարժարանաց մէջ կ'ուսուցանի: — Ամենայն կաթողիկ, ամէն ընտիր գաղղիացի, գերապ. Պատրիարքին ճիզն ու գործունէութիւնը գոված ժամանակ՝ փափաք պէտք է զգայ մասնակցելունակ իւր արդեանց բարեգործ ձեռըն. տուութեամբ, գիտելով մանաւանդ՝ որ այլուստ եղած օգնութիւնք՝ չեն բաւել ամենակարեւոր անդամ պիտոյից: — Վերջերս Կիլիկիոյ Հաճին քաղաքին մէջ հրդեհ մը բոցոյ ճարակ տուաւ միան, գամայն մատուռ, գայրոց, ժուղովրդապետանուց. Արևելեան Գայրոցաց ընկերութիւնն չդանդաղեցաւ մէկէն օգնութիւն ուղարկելու՝ գայրոցը վերականգնելու համար. և առ մեզ սոյն նպատակաւ հուանդնալից յորդոր մ'ուղղեց: որ անտարակոյս պիտի արգիւնաւորի. ուստի կը ծանուցանենք որ դրամական և կամ այլ ինչ տեսակ օգնութիւնք՝ հարկ է ուղղուին առ կեղրոնական պաշտօնաբան վերոյիշեալ ընկերութեան. Արկար փողոց, թիւ 42, ՚ի բարիզ. ուսկից փութով պիտի ուղարկուին առ Նորին Սրբազնութիւնն՝ կաթողիկոս Կաթողիկ Հայոց »: